ՄԱՂԹԱՆՔ Ի ՏՕՆԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ազօրիւ և միջնորդութեամբ բազմաշարշար վկային քո և Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մեծաւ փառօք և բազմութեամբ զօրացդ լուսեղինաց իջեր յերկնից ի դաշտն Արարատեան, ի յայցելութիւն փոքու հօտիդ Քո Ազգիս Հայոց, և ի ցուցումն յատկականի սիրոյդ և մեծի ողորմութեանդ. և ոսկէուռամբ բաղխեցեր զխորս անդնդոց, և հալածեցեր զգունդս սանդարամետականաց. ուր և լուսաձև յօրինմամբ հրաշակերտեցեր զՄայր Աթոռն մեր զՍուրբ Էջմիածին. և արարեր զնա շքեմարան անսպառելի շնորհացդ աստուածայնոց՝ ի լինել ծնող, դաստիարակ և կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս Հայաստանեայց. արդ՝ պահեա՛ զնա անարատ, հաստատուն և անաղօտ, ի պայծառազարդութիւն եկեղեցեացս մետրոց և մանկանցս սոցին մինչև ի կատարած աշխարհի. յորոց միշտ փառաւորի ամենասուրբ անուն Քո յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐԳ

Ամեն հայի սրտից բխած
Լսիր այս ձայն, ո՜վ Աստված.
Երկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հոր.
Տե՜ր, անսասան պահիր դու միշտ
Դ՚ո իսկ հիմնած Մայր Աթոռ: